Ը. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՅՈՒԼԻՍ 1905 — ԹԻՎ 718

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկիմ աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charoum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵՑԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փոխադարձ շնորհակալութիւնս կը յայտնեմ այն ամէն բաժանորդաց եւ բարեկամաց որոնք հեռագրաւ, քարթով եւ կամ անձամբ շնորհաւորեցին անուանս տարեդարձը,

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ Ց. ՔԻՐԻՇԵԱՆ
Գործակալ զանազան լեզուէ լրագրաց
Վառնա, 27 մայիս 1905

ՕՐԷՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Ե.

Դարերով տեղի ունեցած օրինազանցութիւնները, որ մենք մատնանշեցինք նախորդ յօդուածներում, 19րդ դարի վերջում և 19րդի առաջին կիսում իրենց գագաթնակէտին հասան Ֆրանսայի մէջ։ Այդ ժամանակների շրջանում Ֆրանսայի մեծ օրինազանց զաւակները յայտնեցին իրենց երկրում դարերով սրբազործված օրէնքները ոտքի տակ տալ՝ ջնջել ազնուականութիւն, թագաւորական անսահման իշխանութիւն, որոնք սրբազործված հին օրէնքների հիման վրա հարստահարել և դեռ հարստահարում Ֆրանսական խեղճ, տգիտութեան և աղքատութեան մէջ թաղված ժողովրդին։ Այդ բաւական չէր, անհանգիստ օրինազանց մեծ ֆրանսացիները իրենց օրինազանցութիւնով վարակեցին և եւրոպական բոլոր ժողովուրդներին, ու ամբողջ Եւրոպան վերածեցին օրինազանցութեան մի խոշոր հնոցի, որի բոցային հսկայական լեզուները ճեղքելով բոլոր աշխարհագրական սահմանները լափեցին հին կարգերի այն հաստաբուն սիւները, որոնք կոչվում էին օրէնքներ ու ստեղծեցին սահմանադրական Եւրոպա, ազատ Ցունաստան, Իտալիա, Ունգարիա, Ռումանիա։ Սերբիա և Բուլգարիա։ Այս բոլորը այսոր պտուղները են բուրբոններից, մեսերնիխներից, պապերից, կայսրներից և ցարերից հալածված օրինազանցների ապօրինի կերպով պատրաստված ջերմանոցի։

Ու այդ հսկայ օրինազանցութիւնները որչափ պախարակելի, հալածելու արժանի էին ժամանակի օրէնքների «տառական ճշտութեան» հսկիչների, հետեւողների և հայկատակ տարրերի աչքում։ Ու որչափ լրջօրէն մի Մեսերնիխ յենված անպէտք, ժողովրդի իրական շահերը զանց առնող օրէնքների վրա արդարացնում էր իր գազանութիւնները հանդէպ եւրոպական օրինազանցների՝ արդարանալով ան միա, փիծած բանաձեւերով ու որոշումներով, միշտ առաջ քշելով որ ժողովրդի շահերը պահանջում են այդ հալածանքը զենիթին հասցնել, եթէ ոչ օրինազանցները խանգարելով պետական մեքենան վտանգում են երկրի և ժողովրդի բարեկացութիւնը։ Սակայն ապագան, այսօրվան իրականութիւնը ցոյց տուեց որ ընդհակառակ այդ պախարակելի և հալածական օրինազանցութիւնները ժողովրդին իրօք աւելի բարեկացութիւն էին խոստանում և տալիս էր։

Եղրակացութիւն. այսօրվան իրականութիւնը հաստատում է որ մեծ օրինազանցներ, օրէնքներից դուրս և օրէնքների հիման վրա հալածված հռոմայեցի, գերմանացի, իտալացի, ֆրանսացի, անգլիացի, յոյն, բուլգար, սերպ և ունգարացի իրենց ժամանակակից սրբազործված օրէնքների և նրանց չարաչար գործածողների դէմ պայքարելով, նրանց խորտակելով փոխել են ժողովրդների վարչական կազմի անպէտք, յառաջդիմութիւնը կասեցնող, իրական շահերը վտանգող դարեւոր օրէնքների վրա հիմնված, բայց այլեւս ապօրինի, սիստէմը, երեւոյթապէս օրինազանց, բայց իրօք օրինաւոր քայլերով։

ՎԱՐԴՕ

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՇՈՒՐՋԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՁՐՈՒՑՆԵՐ
ԵՒ
ԱՆԳԼ. ՕՐԱԳՐԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ

Վերջին նշանակելի նաւային կռիւէն յետոյ, եւրոպական մամուլի ամէն գոյնի եւ տեսակի պատկանող ներկայացուցիչ իր ուզած ձեւով եւ թօնով կը չափէ ու կը թմփկահարէ խաղաղութեան յաւիտենական պահանջը։

Բոլորն ալ ջերմեռանդ մարդասիրութիւնով մը վալակուած կերեւին... բոլորն ալ կարծես մոռցած են իրենց հին եւ նման արարքները եւ հիմա, ոտքի կանգնած՝ յանուն մարդկութեան կը պահանջեն խաղաղութիւն...

Սակայն զարմանալին հոն է, որ այդ սրբասիպ հոգիները—առաւելապէս Պիզմարքի երկրէն եւ հանրապետական Ֆրանսայէն—իրենց բովանդակ հոգն ու ուշը դարձուցած են միմիայն դժբախտ Ճաբոնի վրայ։ Ինչ է ատոնց ընդհանրութեան պահանջը — Ռուսաստանի համար «ատորնացում» տեղի չունենայ, պատերազմէն պատուաւոր դուրս գայ։ մարդկութեան առջեւ յաւիտեան ամօթով մնալու հարկին տակ չը գանուի։ եւ, — ու այս՝ շարք մը չափազանց երկիրագած (!) եւ բարեմիտ (!) հոգիներէ, — «դեղին ցեղը», «դեղին պատուհասը» կոկոզավիզ՝ ճերմակ քրիստոսակերպ ցեղին քթին խընդալու առիթ չունենայ...

Ի՞նչ սիրուն մտածումներ, որ այդ մարդիկը ընդունակ են միշտ յղանալու...

Երկրէ մը, ինչպիսին է Ճաբոն, որուն առաջին քայլէն մինչեւ վերջինը յաղթանակներով դափնեւորուած են՝ յանկարծ պահանջել զիջանելու այնպիսի կէտերու՝ որոնց համար միլիոններ եւ տասնեակ հազարաւոր կեանքեր զոհած է՝ անոր մէջ բացարձակ միականութենէ զատ՝ կը նկատուի նաեւ սուր եսասիրութիւն մը, վարնոց կեղծաւորութիւն մը, որ մէկ կերպով ալ կերեւի չէ։

Իրաւո՞ւնք է պահանջել Ճաբոնէն այդ բոլորը։ Իրաւո՞ւնք եւ պատիւ է քաղաքակիրթ մամուլին՝ առաջարկել որ Ռուսաստանը բացարձակ «ատորնացման» չենթարկուի պատերազմական տեսակէտով, քանի որ ան բացի ատկէ ուրիշ արժանաւոր վախճան մը ունենալու սահմանուած չէ։ Ի՞նչպէս չնորհել անոր պատիւ՝ որմէ զուրկ է բոլորովին. ի՞նչպէս ենթարկել զայն յարգանքի եւ հիացման՝ որուն արժանի չէ երբէք։

Խաղաղութի՞ւն. այո՛, եւ անմիջական ու վերջնական խաղաղութիւն, եթէ հնար է. — այդ պէտք է ըլլայ ամէն ճշմարտապէս դգայուն անհատի իղձն ու ջանքը՝ այսպիսի ահրեշալի հէքաթօմներու հանդիսատես ըլլալէ վերջ. բայց խաղաղութիւն ոչ այն պայմաններու համաձայն զորս կառաջարկուի կաշառուած եւ անամօթ մամուլի մէկ մասին կողմէ։ Ատ ուրիշ բան չը պիտի նշանակէր՝ այլ եթէ ռուսական բռնապետութեան գարշապարներուն տակ հեծեծող դրժբաղդ ժողովուրդներուն լուծը քիչ մը եւս ծանրացնել. անոր երկաթէ դաժան մագիլները աստիճան մը եւս սրել եւ միապետական մահահոտ պարիսպներուն շուքին տակ կիսամեռ տարածուն՝ մեծազանգուած ժողովրդի մը այս ջախջախիչ պարտութիւններուն մէջէն իրեն համար նշմարած փլկարար արշալոյսի մը ազատ հեռապատկերը միանգամայն հիմնայատակ խորտակել... Դա —այդ կերպով խաղաղութիւնը, — ինչպէս ըսինք, մարդասիրութիւն չըլլար, այլ եւ ոճրագործութիւն, որովհետեւ օգուտը ոճրագործն է միայն։

Անգլիական մամուլն ալ այս խնդրով բաւական զբաղեցաւ։ Պաշտօնական «Թայմզը» վերջին շարթուն միեւնոյն հարցը չօշափող առաջնորդող յօդուածի մը մէջ՝ խօսելով Վաշինկթընի ռուսական հիւպատոս կոմս Քասինիի եւ համբաւաւոր Ալէքսիեվի մէջտեղ բերած «դեղին վտանգի» ապուշ տրամաբանութեան մասին իբրեւ պատճառ կարգ մը «խաղաղասէրներու» առաջադրած համանման պայմաններուն՝ կաւելցնէ հետեւեալ տողերը, զորս իբրեւ պաշտօնական թարգմանը ճաբոնական դաշնակից կառավարութեան՝ ամբողջովին յառաջ կը բերեմ

«Եւրոպական մամուլի օրգաններէն ոմանք, գլխաւորաբար գերմանականն ու Ֆրանսականը, միեւնոյն լոբը կը հնչեցնեն՝ ինչպէս կոմս Քասինին եւ անոնք հեղ մըն ալ կարծեցեալ սարսափի մէջ կը գտնուին՝ «դեղին պատուհասին» քաղաքակրթութեան վերայ բերելիք վտանգներուն նկատմամբ, — թէպէտեւ ճաբոնական յաղթութիւնը ինքնին սկիզբէն ի վեր եղաւ՝ ինչպէս Վիէնական թերթ մը շատ ճշգրիտօրէն կրսէ՝ «հոյակապ յաղթանակ մը գերագոյն քաղաքակրթութեան» Ուրիշներ կը թելադրեն թէ՝ Ճաբոն պէտք է չափաւոր

ըլլայ իր պահանջներուն մէջ, յարգէ իր յաղթահարուած թշնամիին ազգային բաղձանքները եւ մասնաւորաբար, չը ծանրացնէ անոր վրայ վրնասներու հատուցման «սարսռնացու�ը»։ Բոլէ մը իւկ չենք խորհիր թէ Ֆրանսայի կամ Գերմանիոյ եւ կամ ուրիշ ոեւէ երկրի մէջ ամենաթեթեւ մտադրութիւն մը կայ գործնական միջոցներ ձեռք առնելու՝ Ճարոնը իր կուրին օրինաւոր պատուէն զրկելու համար։ Գիտենք, եւ բովանդակ աշխարհ գիտէ թէ՝ այս երկիրը պարտաւոր է՝ ամեն միջոցներով եւ մինչեւ վերջը՝ դիմադրելու այդկարգի բոլոր մեռնարկներուն. Ռուսասէրները պարզապէս կը ճգնին այն թաքթիքներուն վրայ, զորս այնքան յաճախ եւ այնքան ապարդիւնօրէն ճգնեցան առաջները. կոչ կրնեն Ճարոնի շարժել այնպիսի կերպով մը, որ չգիտի երազէին իւկ նոյնը առաջարկելոեւէ մեծ պետութեան՝ համանման պարագաներու մէջ։ Երբ կը պատրաստեն զայն նախայարձակ եղած ըլլալու համար՝ դիտմամբ պատմութիւնը սրխալ ներկայացուցած կըլլան, որ այնքան թարմ է տակաւին մեր յիշողութեան մէջ. Ճարոն երբէք նախայարձակ չէ եղած ոեւէ եւրոպական պետութեան հանդէպ. սակայն դեռ տասը տարի առաջ է որ՝ երկու եւրոպական տէրութիւններ, միանալով Ռուսաստանի հետ, ստիպեցին իրեն եղծել Շիմոնոսքիի դաշնադրութեան Լ'ն կարեւոր յօդուածները Այդ միջամտութիւնն էր վերջերս անդունդը դրկուած նաւերէն շատերուն օգնութեամբ, — որ դէպքերու տրամաբանական շարքով մը ներկայ կռիւը անխուսափելի դարձուց։ Այդ միեւնոյն սխալը այսօր ալ կրկնել պիտի նշանակէ՝ երեւակայական «դեղին պատուհասը» կենդանի իրականութեան մը վերածելու լաւագոյն ճամբան։ Այսպիսի ծրագրի մը, այնքան տխմար, որքան չարամիտ, գէթ Անգլիա անաչառ ընդդիմութիւն մը պիտի ցոյց տայ։

Ասոնք են հանրածանօթ «Թայմզ»ին խօսքերը, որուն վրայ կարելի է աւելցնել նաեւ սա, որ ատի միանգամայն աղաղակն է բովանդակ անգլիացի ժողովրդին, անշուշտ մէկ կողմ ձգելով ամեն գոյն ու ձեւ առնող ազատական մամուլի մէկ աննշան փոքրամասնութիւնը։

Ցաջորդ անգամին պիտի ջանանք ցոյց տալ՝ թէ ինչ տպաւորութիւն յառաջ բերած են սոյն վերջին դէպքերը բուն իր Ռուսաստանի ներքին կեանքին եւ ժողովրդին վրայ.

Մ. ՑՈՂԱԿ

ԵՒՐՈՊ. ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԻՒՆ

(Շրջաբերական նամակ)

Ընկերնե՛ր,

Եւրոպայի Հայ Ուսան. Միութեանս ներկայ տարւոյ համագումարը բացուեցաւ Շվէյցարիայի Բերն քաղաքում, ապրիլ 3ին, «Այգեր» հիւրանոցում ներկայութեամբ 58 հոգու, պատգամաւորներ, անդամներ եւ մի քանի հիւրեր։ Հիւրանոցի ճակատին, ուսանողութեան համախմբման առիթով, կախուած էր հայկական քաղաքական դրօշակը, սեւաւորուած՝ իբրեւ նշան մեր ժողովրդական սուգի։

Համագումարը պատգամաւորներ ունէր Գերմանիայից, Ֆրանսիայից, Բելգիայից եւ Շվէյցարիայից։ Աւստրիական ինչպէս եւ Անգլիական հայ ուսանողները ներկայացուցիչ չունէին, գուցէ այն պատճառով, որ այդ երկիրների մէջ, որպէս եւ Իտալիայում, մեր ուսանողները կազմում են վերին աստիճանի աննշան թիւ, չը շաղկապուած «Միութեան» հետ։ Ռուսաստանի հայ ուսանողութիւնը շատ կարեւոր թւով, պաշտօնական ներկայացուցիչ չունէր, հաւանօրէն արդիւնք այն անսովոր փոթորկման, որին ենթակայ է համալսարանական երիտասարդութիւնը՝ Միապետութեան սահմաններում։

Համագումարի պարապմունքները տեւեցին մի շաբաթ, նախօրօք պատրաստուած օրակարգի համաձայն։ Միութեան անցած գործունէութեան մանրամասն տեղեկագրին ծանօթանալուց յետոյ, ժողովը անցաւ դասախօսութիւններին եւ ուսանողական մարմինների կողմից տուաջադրուած հարցերի քննութեան։ Վերջին նիստերը նուիրուեցին առաջիկայ տարւայ գործունէութեան ծրագրի քննութեան, պատրաստուած Լիազօր Կոմիտէի կողմից։

Դրա գլխաւոր կէտերը հետեւեալներն են։

Ա) «Պրօբականդ եւրոպական մամուլի մէջ»։ Հայ ուսանողները, ծանօթ եւրոպական լեզուների, ունեն բոլոր յարմարութիւնները՝ իրանց ապրած քաղաքներում յարաբերութեան մէջ մտնելու մամուլի օրգանների հետ եւ տեղեակ պահելու հասարակաց կարծիքը հայկական քաղաքական կեանքի ընթացիկ դէպքերին եւ նորութիւններին։ Լրագրների խմբագրութիւնները, ինչպէս ցոյց են տուել եղած փորձերը, սիրով են ընդունում այս աշխատակցութիւնը, եւ հետեւաբար նրա արդիւնաւորութիւնը անկասկածելի է։

Բ) «Բրոշիւրներ եւրոպական լեզուներով»։ Աչքի առաջ ունենալով պրոպագանդային այն խոշոր դերը, որ կատարում են «Միութեան» հրատարակած բրոշիւրները, (մինչեւ այժմ տպագրուած է աւելի քան 25 հազար օրինակ ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով) որոշուեց շարունակել դրանց հրատարակութիւնը։ Այս տարի պիտի տպագրուեն գրքոյկներ իտալերէն ու անգլիերէն լեզուներով եւս։ Բացի դրանից պիտի հրատարակուի եւ մի յատուկ գրքոյկ՝ ռուսերէն լեզուով, որի նպատակը պիտի լինի պարզել ռուս ընթերցողին այն դաւադիր դերը, որ բռնել է ռուսաց կառավարութիւնը դէպի հայկական շարժումը՝ թէ Կովկասում եւ թէ Հայաստանի մէջ։

Գ) «Դասախօսութիւններ»։ Շարունակել կազմակերպել զանազան երկրների կեդրոնական քաղաքներում հրապարակային կոնֆերանսներ եւ միտինգներ նուիրուած մեր քաղաքական վիճակին։ Դասախօսները պիտի լինեն հեղինակաւոր եւրոպացիներ, ծանօթ հայկական դատին։ Անցեալ տարիները՝ Գերմանիայում, Շվէյցարիայում եւ Ֆրանսիայում կազմակերպուած դասախօսութիւնները նուիրուած էին գլխաւորապէս թիւրքահայերի դատին։ Համագումարը ցանկութիւն յայտնեց որ սրանից յետոյ կոնֆերանսների նիւթ լինի եւ Կովկասեան հայերի խնդիրը, որը օրէցօր ընդունում է սուր եւ առանձին ուշադրութեան արժանի կերպարանք։

Ե) «Մեծ-Ժողովածու»։ Համագումարը կրկին անգամ ընդունելով դրա հրատարակութեան կարեւորութիւնը որոշուած նախորդ գոնկրէի կողմից, յանձնարարեց Լիազօր Կոմիտէին՝ ըստ կարելւոյն շուտ պատրաստել եւ լոյս ընծայել «Մեծ-Ժողովածուն»։

Զ) «Թարգմանութիւններ»։ Ուշադրութեան առնելով այն բացառիկ ընդունելութիւնը, որ գտաւ „Հայաստանի քարտէզը" հայ հասարակութեան բոլոր շրջաններում, Համագումարը վաւերացրեց իր պատգամաւորներին՝ ամբողջ ուսանողութեան վրայ։

Գ) «Բրոշիւրներ եւրոպական լեզուներով»։ Աչքի առաջ ունենալով պրոպագանդային այն խոշոր դերը, որ կատարում են «Միութեան» հրատարակած բրոշիւրները, (մինչեւ այժմ տպագրուած է աւելի քան 25 հազար օրինակ ֆրանսերէն եւ գերմաներէն լեզուներով) որոշուեց շարունակել դրանց հրատարակութիւնը։ Այս տարի պիտի տպագրուեն գրքոյկներ իտալերէն ու անգլիերէն լեզուներով եւս։ Բացի դրանից պիտի հրատարակուի եւ մի յատուկ գրքոյկ՝ ռուսերէն լեզուով, որի նպատակը պիտի լինի պարզել ռուս ընթերցողին այն դաւադիր դերը որ բռնել է ռուսաց կառավարութիւնը դէպի հայկական շարժումը՝ թէ Կովկասում եւ թէ Հայաստանի մէջ։

Դ) «Հրապարակային դասախօսութիւններ»։ Շարունակել կազմակերպել զանազան երկրների կեդրոնական քաղաքներում հրապարակային կոնֆերանսներ եւ միտինգներ նուիրուած մեր քաղաքական վիճակին։ Դասախօսները պիտի լինեն հեղինակաւոր եւրոպացիներ, ծանօթ հայկական դատին։ Անցեալ տարիները՝ Գերմանիայում, Շվէյցարիայում եւ Ֆրանսիայում կազմակերպուած դասախօսութիւնները նուիրուած էին գլխաւորապէս թիւրքահայերի դատին։ Համագումարը ցանկութիւն յայտնեց որ սրանից յետոյ կոնֆերանսների նիւթ լինի եւ Կովկասեան հայերի խնդիրը, որը օրէցօր ընդունում է սուր եւ առանձին ուշադրութեան արժանի կերպարանք։

Ե) «Մեծ-Ժողովածու»։ Համագումարը կրկին անգամ ընդունելով դրա հրատարակութեան կարեւորութիւնը որոշուած նախորդ գոնկրէի կողմից, յանձնարարեց Լիազօր Կոմիտէին՝ ըստ կարելւոյն շուտ պատրաստել եւ լոյս ընծայել «Մեծ-Ժողովածուն»։

Զ) «Թարգմանութիւններ»։ Ուշադրութեան առնելով այն բացառիկ ընդունելութիւնը, որ գտաւ „Հայաստանի քարտէզը" հայ հասարակութեան բոլոր շրջաններում, Համագումարը վաւե-

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

35

Է.

(Շար. նախորդ թիւեն)

—Ճիշտը, շարունակեց Վիկտորիան, մտածելով Արինային սիրում էլ եմ. պէտք է խօստովանել որ նա ինձ վրա ազդեցութիւն ունի։ Այժմ աւելի քիչ, բայց կար ժամանակ որ ես ինչպէս փոքրիկ աղջիկ միշտ նրան էի նայում. գործնական խնդիրների մասին խօսել չեմ ուզում. Արինան է իմ ամէն գործերը վարողը եւ կարգադրողը. բայց սեփական կեանքիս վերաբերեալ խնդիրներում մի տաս անգամ պատահել է որ ես նրա խորհրդին եմ հետեւել։ Երբ ես ոեւէ յիմարութիւն եմ անում, անյարմար կացութեան մէջ ընկնում, իմ առաջին մտածումս լինում է թէ Արինան ի՞նչ պէտք է ասէ, եւ չէ կարելի արդեօք այդ սխալը ծածկել Արինայից։ Պատահում է որ նա յանդիմանում է ինձ առանց քաշվելու, իր գեղջուկ կնոջ լեզուով ու մենք ի հարկէ սրդողում ենք իրարու հանդէպ եւ վերջ ի վերջոյ անցնում է ամեն ինչ։ Սիրում եմ։ Այս էլ տարօրինակ է, թէ ի՞նչի։ Նրա բարոյական յատկութիւնների իմ կողմից գը նահատումը դուք լսեցիք արդէն։

Անցեալում... ես արդէն ձեզ պատմել եմ որ հօրաքոյրս նրա միջոցով է ինձ ծախել Պորուբկովին։ Եւ ահա հօրաքրոջս, որ իմ մանկական հոգիս եւ մարմինս կորստի է մատնել, արիւնս խմել, ես ատում եմ ամբողջ հոգով, բայց Արինային ներել եմ։

Եւ շատ կը վշտանայի եթէ զրկվի Արինայից։ Տարբերութիւնը որ տեղից է։ Նրա համար արդեօք որ հօրաքոյրս ինձ ծախած միջոցին հասկանում էր որ ինձ կորստի է դատապարտում, ու անիծեալ ձեռքերը չը ողոյին։ իսկ Արինան չը գիտէր իր անելիքի չարութիւնը եւ ընդհակառակը իր անբարոյական երեւակայութեամբ դեռ կարծում էր որ ինձ բարիք է անում։

Կամ թէ նրա համար որ ես ուժը շատ եմ սիրում եւ Արինայի այդ ոճրագործական յատկութիւնը ինձ հրապուրում է։ Նա ահեղ եւ անսանձ է։ ինչ որ մտածէ, այն էլ կանէ — կացինով կտրելու պէս։ օրինակի համար նրա երկխաս ոչնչացնելու առաջարկը...

—Ոչ, ասում եմ։ մի համարձակիր այդ տեսակ առաջարկութիւն անել ինձ։ ես քեզ կարտաքսեմ։

—Էհ ուրեմն ապօրինի զաւակների ապաստանը տանենք։

—Բայց միթէ այդ Նեվա գետից լաւ է՞։

—Ճիշտ է, պատասխանում է Արինան, մի տարբերութիւն կայ որ աչքիդ հեռու եւ իշխանութեան հանդէպ էլ անմեղ կը մնաս։ Բայց ինչ՞ի ես ուզում մեծցնել երեխային։ Դու քեզ հազիւ ես կերակրում, ուր մնաց որ նրան դասդիարակես եւ կրթես։ Մինչդեռ ջրի մէջ քարի հետ յատակը կերթայ։ Այդ այժմ։ բայց եթէ մեծցնես էլ, կարծես ապագայում խեղճ ապօրինին կեանքում շատ օգուտնե՞ր կունենայ։ Ոչ նա իրաւունքներ կունենայ եւ ոչ էլ դուռ ուրախութիւն։ Հօրը նմանի հարբեցող պէտք է դուրս գայ մորը, աւազակ հօրաքրոջ հետ ինչ բաներ կը պատահեն եթէ երեխան տանը պահես։ Այդ հարստութիւնը վզիդ, ամուսնութիւնն էլ մնաս բարով։

Այդ տեսակներին գիւղացիներն էլ կնութեան չեն վերցնում, իսկ ազնուականները այդպիսի պարագայում ես առաւել սնամիտ են։

—Իսկ եթէ ես կը սիրեմ նրան։

—Լէհ, ինչի պէտք է սիրես. եթէ կարգին մարդից լինէր, էլի մի բան է. բայց գտել ես յիշատակ պահելու մարդը լաւ յիշողութիւն է ամբողջ կեանքի համար։

Երեք ամիս շարունակ Արինան միշտ այդպէս ինձ սղոցում էր։

—Կորցրու, կորցրու կրկնելով։

Վերջապէս մի օր էլ, ծննդաբերութեանս տագնապի օրերին իմ մօտ գալիս է եւ յայտարարում.

—Ահա ինչ, ես հնար եմ գտել թէ ինչպէս երեխան ողջ եւ աչքիդ առջեւ պահել, միեւնոյն ժամանակ էլ դու ազատ կը լինես մարդկանց ամօթից եւ զրոյցներից։ Նախիժինցի Միրոշկիներին յիշում ե՞ս։

բացրեց Լիազոր Կոմիտէի առաջարկը— պատրաստել հայաբնակ բոլոր նահանգների առանձին-տառանձին՝ մանրաման քարտէզները՝ լատիներէն տառերով, թէ «Մեծ. Ժողովածուի» մէջ զետեղելու, եւ թէ դրանից անկախ տարածելու համար։ Մինչեւ այժմ տրդէն լոյս են տեսել «Ատրպատականը» եւ „Սասունը“։ Պատրաստւում է «Կիլիկիան»։ Նախագծած շարքի մէջ պէտք է մտնեն Հայաստանի վեց նահանգները եւ Անդրկովկասը։

Համագումարը միաձայն ընդունեց եւ հետեւեալ որոշումը.— Միութեան բոլոր անդամները, ուսանողներ եւ ուսանողուհիներ, պարտաւոր են տեղական Եւրոպական Զինավարժական ընկերութիւնների միջոցով կամ այլ եղանակով, վարժւել հրացանձգութեան եւ առհասարակ զէնքի գործածութեան, մի մարգանք որ ներկայ քաղաքական պայմաններում պիտի համարուի կարեւոր եւ օգտակար։

«Նախահաշիւ»։ Նախագծած ձեռնարկների իրականացման համար, Համագումարը կազմեց 25000 ֆրանքի տարեկան նախահաշիւ։ Այդ գումարից գանձարանի մէջ կայ այժմ մօտ տասն հազար ֆրանք, հանգանակուած յատկապէս «Մեծ. Ժողովածուի» տպագրութեան համար։ Մնացած 15 հազար ֆրանքը պիտի հաւաքուի այս տարի, որի համար պահանջւում է թէ՛ Կոմիտէի եւ թէ ուսանողական մարմինների եռանդուն գործակցութիւնը։

———

Վերջին նիստերում համագումարը որոշեց յայտնել՝

1) Համակրանք երկու բռնակալութիւնների՝ Ռուսաստանի եւ Թիւրքիայի սահմաններում տանջւող բոլոր ժողովուրդների ազատագրական շարժման.

2) Համակրանք բոլոր յեղափոխական-մարտական կազմակերպութիւններին, որոնք կռիւ են մղում այդ բռնապետական ռէժիմի ապալման համար.

3) Համակրանք «Պրօ-Արմէնիայի» խմբագրական կոմիտէին այն ծառայութիւնների համար, որ նա ցոյց է տալիս հայկական գատին.

4) Շնորհակալիք Իտալիայի համալսարանական երիտասարդութեան, հայ ուսանողներին եւ հայկական գատին ցոյց տուած համակրանքի համար։

Համագումարի միւս որոշումները — հրատարակական չեն։

Յաջորդ համագումարը կը կայանայ 1906ին։ Տեղի որոշումը թողնւած է Լիազոր Կոմիտէին՝ ուսանողական մարմինների խորհրդակցութեամբ։

Ընկերական բարեւներով

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

1905 մայիս
Ժընեվ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲԻՆ Ի ՎԱՌՆԱ

—○○—

ՆԻՍՏ Ա.

Վառնա 29 մայիս 1905 ի խորհրդարանի թաղ. խորհրդոց ներկայ անդամք։

Տէր Վահրամ քհն. Մըսըրլեան
Տիար Տօք. Թորոսեան
« Սարգիս Քիւրտեան
« Յակոբ Թօսպրյրգեան
« Յակոբ Գուրպէթեան
« Փիլիպպոս Հալաճեան

Մայիս 26ին եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի ունեցած ժողովրդական համագումարին որոշմամբ՝ Արժ. Տէր Վահրամ հօր կողմէ ստացուած հրահանգներուն համեմատ ներկայ եղող վեց անդամներով բացուեցաւ առաջ. յանձնախմբին Ա. նիստը.

Որոշումներ

Ա. Նախ հարկ դատուեցաւ կարդալ համագումարին որոշումները, որ հետեւեալն է

«Վառնայաբնակ հայերս, շուրջ 400 հոգի, հաւաքուելով եկեղեցւոյ բակին մէջ, հրապարակաւ կարծեաց փոխանակութիւններ ընելէ վերջ, առաջնորդական խնդրոյն նկատմամբ հետեւեալ որոշումները տուինք.—

Ա. «Նկատեցինք թէ Պուլկարահայոց եկեղեցական, կրթական, ազգային եւ քաղաքական շահերը կը պահանջեն անպատճառ եպիսկոպոսառաջնորդ մը ունենալ, սահմանադրական հիմերու վրայ ընտրուած ժողովականներով. Բ. Վառնայի հայաբնակ հայերս կրկին կը հաստատենք այն որոշումը թէ առաջնորդարանի ծախուց համար պատրաստ ենք. 1903 ին մեր հանդիսաւոր խոստումը յարգելով, տարեկան 1400 ֆր. վճարել.

Գ. Նկատելով թէ Պոլսոյ Պատրիարքարանը թուրք կառավարութեան ճնշումներուն տակ անկարող է մեզ ղրկել մեր պէտքերուն համապատասխան յատկութիւններով օժտուած բարձրաստիճան եկեղեցական մը, կը բոլշենք դիմել Վեհ. Կաթողիկոսին եւ իրմէ խնդրել մեր ընտրելի առաջնորդին վաւերացումը եւ առաքումը. Դ. Խնդրել նաեւ Վեհ. Կաթողիկոսէն որ իր կողմէ պատուիրակ ղրկէ մնչ Տէր Եզնիկ եպսկ. Սապահունին, որուն պաշտօնը ըլլայ Պուլկարիոյ առաջնորդական ընտրութիւնը ի գլուխ հանել.

Ե. առաջնորդական այս կարեւոր խնդրոյն համար Պուլկարիոյ միւս հայաբնակ քաղաքներու ազգայնոց եւ թաղականութեանց հետ բանակցելու եւ հարկ եղած պաշտօնական եւ անպաշտօն գիմումները ընելու համար կընտրենք յանձնախումբ մը եօթը անձնաւորութիւններէ բաղկացեալ, որոնք խորհրդակցելով. տեղւոյս պատ. թաղ. խնրհրդոյ հետ, նախաձեռնութիւն ստանձնեն եւ դիմումներ ընեն որոնց որ հարկ է.

Զ. Յանձնախմբին անդամ ընտրեցինք միաձայնութեամբ Արժ. Տ. Վահրամ քհն Մըսըրլեան, Տ. Տ. Տօք. Թորոսեան, Սարգիս Քիւրտեան, Յակոբ Թօսպրյրգեան, Փիլիպպոս Հալաճեան, Յակոբ Գուրպէթեան, եւ Արշամ Փաշաճեան»

Համագումարի սոյն որոշումները Յանձնախմբի վեց անդամներուն միայնգամայն ընդունելի լինելով, միաձայնութեամբ որոշուեցաւ ստանձնել ժողովուրդին կողմէ յանձնուած այդ պաշտօնը.

Բ. Դիւանի ընտրութեան ձեռնարկուելով, միաձայնութեամբ ընտրուեցան Տ Տօք. Թորոսեան Ատենապետ՝ եւ Տ. Յակոբ Գուրպէթեան Ատենադպիր. ընտրեալք ընդունեցին իրենց պաշտօնը։

Գ. Մի առ մի նկատի առնելով համագումարի որոշումները եւ յետ խորհրդակցութեանց՝ որոշուեցաւ խնդրել Վառնայի պատ. թաղ խորհուրդէն որ բարեհաճի համագումարի մի եւնոյն որոշումները հաղորդել Պուլկարահայոց բոլոր թաղ. խորհուրդներուն եւ յանձնարարել. որպէսզի անոնք ալ իրենց կարգին տեղական ժողովրդին կամքը առնելով, այդ մասին, իրեն հաղորդեն.

Դ. Որպէսզի համագումարին որոշումներու գործադրութիւնը եւ բաղձալի եղանակաւ Առաջ. ընտրութիւնը չը յապաղի, որոշուեցաւ յանձնախմբիս կողմէ լրագրաց միջոցաւ կոչ ընել Պուլկարիոյ բոլոր հայաբնակ քաղաքներու ազգայնոց. որ իրենք ալ այս կարեւոր խնդրոյն մըզում տան եւ օժանդակեն տեղական թաղականներուն.

Դ. Լրագրաց տրուելիք կոչին խմբագրութիւնը դիւանին յանձնուելով նիստը գոցուեցաւ ժամը 4ին երեկոեան.

Ատենադպիր Յ. Գուրպէթեան — Ատենապետ Տօք. Թորոսեան

ԿՈՉ
ԱՌ ՀԱՄԱՑՆ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՒԹԻՒՆՆ

—○○—

Պուլկարիան առաջնորդական վիճակի մը վերածելու անխուսափելի պէտքը, անհրաժեշտութիւնը արդէն իսկ ամէն հայ ըզգացած և այդ պէտքին գոհացում տալու համար հարկ եղած աջակցութիւնը խոստացած ըլլալով, հոս սւելորդ պիտի ըլլայ այդ մասին ծանրանալ, քանի որ նոյն հանդիսաւոր խոստումներէն վերջ

—Գիտեմ ծերունի հարուստ գիւղացիներն են։

—Նրանք անզաւակ մարդիկ են, իրենք հարազատ զաւակ ունենալու յոյսը կտրած են, իսկ փոքրիկներին չափազանց սիրում են. եթէ երեխան նրանց տունը նետենք, գաղտնի կերպով, Աստուծու օրհնութիւն կը համարեն ու շատ լաւ հանգիստ կը մեծցնեն։ Ամեն օր հառաչելով ասում են,—մեր տունը ամէն բանով լիքն է միայն մանուկ, հրեշտակային հոգին է պակասում մեզ։

—Ուրեմն իմ երեխաս գիւղացու նմա՞ն պէտք է մեծանայ։

Արինան թունոտ նայւածք է գցում ինձ եւ շարունակում.

—Իսկ քեզ մօտ ապրելով ի՞նչ պիտի դառնայ. գեներալ պէտք է լինի, ի՞նչ է։ Գոնէ այնտեղ կուշտ կը լինի

Կրկին մենք վիճեցինք մինչեւ արցունք, կուեցինք... իրար քաշքշեցինք. վերջապէս հաշտվեցինք։

—Էհ, ասում է Արինան, եթէ դու շարունակում ես քո յամառ յիմարութիւնը, երեխան մօտդ պահելով, ուրեմն շարունակիր մինչեւ վերջը. այնժամանակ պէտք է որ դու ամուսնանաս Աֆանասիչի հետ։

Գժվել ե՞ս, հարցնում եմ ես։

—Ոչ իրօք, երեխան կը մեծանայ եւ կը հարցնէ դու իմ մայրս ես, բայց հայրս ո՞ւր է. ամենքն էլ հայր ունեն, բայց իմս ո՞ւր է։ Այն ժամանակ ի՞նչ կը պատասխանես։

—Այդ շատ հեռու է դեռ։

—Ով գիտէ. հիմա երեխաները շուտ ըմբռնող են։ Իսկ եթէ այդ միջոցներին դու լաւ լինես. կեանքդ կանոնաւորված լինի, խելքդ գլուխդ եկած, պէտք է ամօթ զգաս հօրը մատնանշելու, ու եթէ այդ միջոցին Աֆանասիչը հարբելուց ցանկապատի տակ մեռած լինի ի՞նչ կարող ես անել։ Եթէ ապրի էլ եւ. տղադ տեսնի այդ տեսակ հայր ունենալու համար աչքերիդ մէջը կը թքէ... Այս էլ մըտածիր որ Աֆանասիչը քո դէմ ոչ մի փաստ չունի. ուրեմն դու նրա մօտ արդար ես. իսկ նա քանի ողջ է կը լոէ։ Իսկ եթէ երեխան քեզ մոտ մընայ ու յանկարծ էլ նրան նմանի, այնժամանակ նա հոգեառ հրեշտակ կը դառնայ ու ամեն ինչ կուզէ ապրուստի համար. ու դու կը՛տաս ամեն ինչ, որպէս զի նա լռէ, մարդիկ չիմանան թէ դու այդպէս անպիտանին անձնատուր ես եղել հպարտութիւնդ կսիպէ քեզ ամեն զոհողութիւն յանձն առնել։

Ճիշտ է, յանդուգն ես, բայց սըտում ես. այդ չես կարող անել, քո ուժերից վեր է. ինքդ քեզ ջուրը կը նետես կամ թէ կըսպանես նրան. իսկ Աֆանասիչի համար արժէ գնալ սիբիր, դատարաններում քաշ գալ, խայտառակվել։

Նայիր կրկին չըստիպվես անտառ վազել. բայց այս անգամ ոչ քո ազատ կամքով այլ այն անպիտանի հրամանով։

—Էհ, այդ արդէն երբէք չէ կարող լինել։

—Իսկ դու Դիմովի աղջկայ մասին լսե՞լ ես։

—Ի՞նչ Դիմովի։

—Կազանի Դիմով մեծ վաճառականը Աննա անունով մի աղջիկ ունէր շատ վազուցները։ Դիմովները Կազանի ամենահարուստ վաճառականները էին։ Իսկ Աննուշկան հրաշալիօրէն գեղեցիկ, կրակ ու բոց, ոչ քեզնից պակաս. եւ ահա այդ աղջիկը սիրահարվում է իր գործակատարներից մէկի վրա Տղան սկսում է այցելել աղջկայ իուցը Մի օր այդպէս նստած են, սիրաբանութեան մէջ, մէկ էլ յանկարծ Աննուշկան լսում է հօր ոտնաձայնը. աղջիկը սիրեկանին շտապով թագցնում է փետրէ դոշակի տակը եւ ինքն էլ վրան նստում բարձերն էլ վրան չարում. հայրը ներս մտնելով նստում է եւ կէս ժամի չափ աղջկայ հետ զրուցելուց յետոյ հազիւ հեռանում։

Աննուշկան շտապով ուզում է ազատել սիրեկանին բայց նա արդէն մեռած է. շնչահեղձ է եղել։ Ո՞ւր դնել հանգուցեալին։ Երիտասարդ դռնապանի հետ պայմանաւորվում է որ նա մեռելին սուս փուս դուրս տանի սենեակից եւ. կազան գետի մէջ նետէ։ Դռնապանը գործը կատարում եւ վարձը ստանում է։ Քիչ է ասում է, սուելացնում է. բայց դռնապանը կրկին գալիս է ուզում մատնիք թանկագին քարեր. Թալանում, թալանում է եւ վերջապէս մի օր էլ յայտարարում է, Աննուշկա գիշերը սպասիր ինձ. իսկ եթէ ներս չը թողնես, կառավարութեան կը յայտնեմ, երկուսս էլ կը կորչենք, մեզ կը մորակեն... Աննուշկան հպատակվում է։ Ու այդպէս այդ դռնապանը երկար չարչարում է Աննուշկային, համբերութիւնը հատցնելու չափ։

(Շարունակելի)



անոր կարեւորութիւնը չէ մեղմացած, այլ աւելի լրջացած է։ Միայն հոս մատնանշել հարկ է թէ Պուլկարահայոցս կողմէ այնչափ ոգեւորութեամբ ընդունուած և բաղձացուած առաջն. խնդրոյն ցարդ անլուծելի մնալուն պատճառը ուրիշ բան չէ բայց եթէ մեր սխալ դուռ զարկած լինելն։

Մենք մինչեւ ցարդ մեզ Ա. առաջնորդի մը առաքումը ակնկալած ենք Պոլսոյ պատրիարքարանէն, որ թուրք կառավարութեան ճնշումներուն տակ կարող չէ եղած ոչ մեր ուզածը և ոչ ալ իր ուզածը մեզ տալ։ այլ ան պարտաւորուած է անպատճառ թուրք կառավարութեան սիրած մէկ վեղարաւորը մեզ զրկել իբր հովիւ կամ առաջնորդ, որով մեզ ենթարկել կերպով մը թուրքին քըմահաճոյքին ու վերահսկողութեանը։ ինչ որ մեր ազգային շահերուն տրամագծօրէն կը հակառակի։ Հետեւաբար մեր բողխելիք դուռը Պոլսոյ պատրիարքարանի դուռը չէ։

Այս պարագաներուն տակ պէտք է մենք դիմենք Վեհ. Կաթողիկոսին, որ հոգեւոր գերիշխանն է Պատրիարքարանին և հայրը Ամենայն Հայոց։ Ինք կըմբռնէ մեր զրկումին ծանրութիւնը եւ կը հաճի տալ մեզ ինչ որ մեզ պէտք է և ինք կարող է մեզ ընծայել այն դիւրութիւնները՝ զորս Պատրիարքարանը տասնեակ տարիներու ընթացքին մէջ կարող չեղաւ տալ։ Հոս չենք ուզեր այն տեսակ բացատրութեանց եւ մանրամասնութեանց մտնել որոնք յարմար չեն հրապարակ դրուելու։

Արդ, Յանձնախումբս կոչ կընէ Պուլկարիոյ բոլոր քաղաքներու յարգոյ հայ հասարակութեանց որ խմբովին դիմում ընեն և ուժ տան իրենց տեղական թաղականութիւններուն, որպէսզի այս վերոյիշեալները՝ քաջալերուած ժողովրդեան ոգեւորութենէն՝ զան միացնել իրենց ուժերը Վառնայի Թաղ. Խորհրդոյն, որ այս առթիւ իբր Պուլկարիոյ էն բազմահայ կեդրոնին ներկայացուցիչը, նախաձեռնութիւնը ստանձնած է ժողովրդին արտայայտած բաղձանքին յենլով։

Ի դիմաց Առաջն. Յանձնախմբին

Ատենադպիր Ատենապետ
Յ. Գուրպէքեան Տօքթ. Թորոսեան

Վառնա, 29 Մայիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իմացայ որ Պալքանեան շրջանի վերջին Պատգամ. ժողովին մէջ, խնդրոյ նիւթ դարձնելով նախորդ շրջանական ժողովի ատենագրութեանց իմ կողմէ արտագրուած ըլլալը, Փիլիպէէն եկած կարգ մը պատգամաւորներու ներկայութեանը և մասնակցութեամբը արձանագրել տրուած է պէտք չէր ինձ նման «անվստահելի» անձի մը յանձնէին անոնք։

Արդ՝ ցոյց տալու համար թէ ոչ միայն իմ մասիս ոեւ է անվստահելիութիւն գոյութիւն ունեցած չէ երբէք, այլ, ընդհակառակը, միշտ վայելած եմ, խնդրին ծանօթ ընկերներու կողմէ իսկ, «վստահելիութիւն» մը զոր գուցէ շատ մը կեդր. կոմիտէի անդամներ չեն ունեցած, — ձեզի կը զրկեմ արձակ մը թղթակցութեանց իմ և Ռոստոմի միջեւ, որոնք կապացուցանեն թէ այդ դէպքէն ետքը, դեռ տարիներով ո՛ր անտիճանի անվերապահ վստահութեամբ վերաբերած են ինծի Պալքանեան կեդր. կոմիտէն և Դաշնակ. ներկայացուցիչ ու նոյն կեդր. կոմիտէի անդամ Պ. Ռոստոմը։ Իսկ այդ նամակներէն առաջ, ամբողջ Փիլիպէ մնացած ժամանակս։ անհերքելի ճշմարտութիւն է թէ ես Առժամ. կեդր. կոմիտէի ամենագործօն անդամը եղած եմ, պահելով միանգամայն Պալքանեան շրջանի բոլոր յարաբերութիւնները ու ժողովներու ատենագրութիւնները։ Եւ քանի որ իմ նախորդ խնդիրը հրապարակ ելած է ձեր թերթին միջոցաւ, այս մանրամասնութեանց մասին զձեզ տեղեկացնելով կուզեմ որ դուք ալ գիտնաք բոլոր պարագաները և ըստ այնմ կազմէք ձեր համոզումը։

Ընդունեցէք բարեւներս։

Լեւոն Սարգսեան

Վառնա, 1 յունիս

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Դանուբի ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ընկերներին

Շնորհակալութիւն ձեր համակրական տողերի համար։ Ձեր գրութիւնը չենք հրատարակում, մտածելով որ հրատարակելու համար չէք զրկել, եթէ այդ նպատակով էլ զրկած լինէիք, անկարելի կը լինէր ամբողջովին հրատարակել, որովհետեւ այնպիսի կէտեր կան որ միայն կազմակերպութեան են վերաբերում։ Ձեզ պաշտօնապէս ներկայացող խպլիկի հոգին բաւական ճանաչել ենք։ Ծառան միշտ ծառայ պիտի մնայ իր գոյութիւնը պահպանելու համար։ Դաշնակցութեան օրէնքի համաձայն տեղական կոմիտէն տեղական գործերի մէջ անկախ և ազատ է, եթէ միայն մեծամասնութիւնը վերջը չէ անցնում դրսէն եղած կարգադրութեան կողմը, որը առհասարակ անում են... օրէնքը հակողների թելադրութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն կը հեռագրեն որ Էրզրումի նահանգին մէջ պուլկարներուն դէմ հալածանքը կը շարունակուի։

— Հռոմի թուրք դեսպանը իր կառավարութենէն հեռագրով հրահանգ պահանջած է թէ ինչ դիրք պիտի բռնէ Իտալիոյ կառավարութեան հանդէպ Թրապլուզի խնդրին առթիւ, որը շատ կը անհանգստացնէ Թուրքիան։

— Ռումէն կառավարութիւնը թուրքիոյ ուշադրութիւնը կը հրաւիրէ այն երեւոյթին վրայ որ յունական հրոսախումբերու սպառնական դիրքը զօրեղացած է ուլախներու հանդէպ, վերջին իրատէէն յետոյ։

ՖՐԱՆՍԱ

Լուր կայ որ Ֆրէյսինէէն եռանդով խնդրուած է արտաքին գործոց նախարարին պաշտօնը ընդունիլ։

ՇՎԷՏ ՆՈՐՎԷԿԻԱ

Սթոքհոլմէն Մայիս 30ին կը հեռագրեն որ Շվէտիոյ նախարարական խորհուրդը որոշած է Նորվէկեան ժամանակաւոր կառավարութիւնը չի ճանչնալ։ Կը կարծուի որ Նորվէկիայի դէմ մթայն խաղաղ միջոցներ ձեռք առնուին։

ՌՈՒՍԻԱ

Մոսկուայի Զեմստվոյի ժողովը ցարին ուղերձ մը զրկած է պահանջելով պետական կազմակերպութեան փոփոխութիւնը, այդ գրութիւնը որ սկսուած է առանց սովորական ձեւակերպութեան շատ ազատօրէն գրուած է և մենք միւս համարին մէջ կուտանք անոր թարգմանութիւնը։

— Երեւանի գաւառի մէջ թաթարական խժդժութիւնները դեռ կը շարունակուին։

— Մայիս 30ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ «Բոլշայա Մորսկայա» փողոցին վրայ, Կոբոտա ճաշարանին քով, քանի մը մարդիկ ռարճանակներ արձակեցին։ Ըստ երեւոյթին ատոնք բարձրաստիճան մարդ մը կըսպասէին։ Երկու ոստիկաններ ըսպաննուած և մէկը վիրաւորուած է։

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ յեղափոխական մարմինը որոշած է բոլոր մեծ իշխանները սպաննել բացի երեքէն։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Հեռագիրները կը հաղորդեն որ Ճապոն և Ռուս կառավարութիւնները համաձայնած են հաշտութեան բանակցութիւններ ըսկըսուելու։

Այդ առթիւ կարելի է որ պատերազմական գործողութիւնները առժամապէս դադրին։

— Միացեալ նահանգներու նախագահ Ռուզվէլթ երկու թշնամի կառավարութիւններին դիմած է գեղեցիկ գրութեամբ առաջարկելով որ հաշտուին եւ միեւնոյն ժամանակ շեշտած է որ աւելի լաւ երկու կառավարութիւնները ուղղակի իրարու հետ բանակցին։

Այս օրեր կսպասուի որ Ճապոն և ռուս կառավարութիւնը իրենց լիազօրները ընտրեն։ Բանակցութիւնները տեղի պիտի ունենան Վաշինկթընի մէջ։

— Մէկ կողմէն հաշտութեան մասին կը խօսուի, միւս կողմէն ալ պատերազմի դաշտէն լուրեր կը հասնին որ ցամաքային մեծ ճակատամարտը սկսուելու վրայ է։ Ռուս զօրքերը լաւ կզգան ինքզինքնին ու յոյս ունին որ այս անգամ մեծ յաղթութիւն մը պիտի տանին։

ՏՈՒՐՔԵՐՈՒ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

Սօպրանիէի ԺԳ. նստին մէջ ընդունուած այս նոր կանոնագիրը մեծ մասամբ յեղաշրջած է նախորդ օրէնքները։ Մեր ազգայինները առհասարակ, մանաւանդ գիւղի խանութպաններն ու արհեստաւորները չեն գիտեր այդ օրէնքները ու միշտ ալ կը վնասուին, տուրք մը երկու անգամ կը վճարեն կամ աւելորդ տեղը տուգանք կուտան առանց պաշտօնական ապօրինութեան դէմ բողոքելու։

Ուստի այդ կարգի ազգայիններու ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ հայերէնի թարգմանելով հրատարակեցինք այդ կարեւոր օրէնքները։ Մեր հրատարակած տետրակը գրպանը ունեցողը ոչ մէկ պաշտօնեայէ չի խաբուիր, կը գիտնայ թէ ե՞րբ կամ որո՞ւ պիտի վճարէ տուրքը, տուգանք պիտի տայ թէ ոչ եւ որչափ եւն։ Ոչինչ գումարի մը համար ազահութիւն չընողը տասնեակ ֆրանքներ պիտի չահի ապահովապէս եւ ուրիշներու ալ պատճառ պիտի ըլլայ որ շահին։

Կը հրաւիրենք մեր ազգայինները որ օգտուին առիթէն։

Լեզուն շատ պարզ է, եւ կարեւոր տեղերը Պուլկարերէնը կամ տաճկերէնն ալ տպուած է։

Գին 2) սանդիմ փոսթի ծախքով 25 Գրամի փոխարէն 5 սանգիմնոց նամակադրոշմ ալ կընդունուի։

Դիմել Օնիկ Բարսեղեանի «Արեւելեան տպարան»։

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна